ԿԱՐԾԻՔ

Տիգրան Ռազմիկի Մանուկյանի Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված «Ֆինանսական վիճակի վերլուծության և գնահատման կատարելագործման ուղիները (ՀՀ խմիչքների արտադրության նյութերով)» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Ներկայացված աշխատանքը նվիրված է խմիչքների արտադրության ոլորտի կազմակերպությունների ֆինանսական վիճակի վերլուծության և գնահատման կատարելագործման ուղիներին և հիմնված է ոգելից խմիչքների արտադրությամբ զբաղվող հայրենական կազմակերպությունների հաշվետվական տվյալների վրա:

Կազմակերպության ֆինանսական վիճակի վերլուծությունը հանդիսանում է խիստ կարևոր և արդիական հարց ինչպես կոնկրետ կազմակերպության, այնպես էլ այլ շահակիցների համար, որոնք հետաքրքրված են տվյալ կազմակերպության գործունեությամբ՝ յուրաքանչյուրն իր նպատակների համատեքստում: Միաժամանակ, շուկայական մրցակցության պայմաններում կազմակերպությունների գործունեության անընդհատությունը զգալիորեն պայմանավորված է կազմակերպության ղեկավարության կողմից կողմից կազմակերպության ֆինանսական վիճակի ճիշտ գնահատման և այդ վիճակի բարելավման ուղղությամբ արդյունավետ կառավարչական որոշումների կայացման հանգամանքով:

Ավելորդ չէ նշել, որ մի կողմից առկա է մեծ հետաքրքրություն կազմակերպությունների ֆինանսական վիճակի վերլուծության և գնահատման արդյունքների նկատմամբ, մյուս կողմից կազմակերպության ֆինանսական վիճակի վերլուծության և գնահատման առանձին տեսական և մեթոդական հարցերը՝ տնտեսական առանձին ոլորտների և կազմակերպությունների մակարդակում բավականաչափ մշակված չեն:

Վերը նշված հանգամանքներով էլ պայմանավորված է հեղինակի կողմից ընտրված թեմայի արդիականությունը:

Ատենախոսության նպատակն ու խնդիրները

Աշխատանքի նպատակն է ֆինանսական վիճակի վերլուծության միջազգային և հայրենական փորձի բազմակողմանի ուսումնասիրության հիման վրա մշակել ՀՀ ոգելից խմիչքների ոլորտի ձեռնարկությունների ֆինանսական վիճակի վերլուծության և ախտորոշման տեսական և մեթոդաբանական հարցերի կատարելագործման ուղիներ և կատարել գործնական առաջարկներ դրանց ներդրման ուղղությամբ:

Նպատակի իրագործման համար հեղինակն իր առջև դրել է հետևյալ խնդիրները.

- նորմատիվ իրավական ակտերում, հայրենական և արտասահմանյան հեղինակների աշխատություններում ֆինանսական վիճակի վերլուծության վերաբերյալ առկա մոտեցումների, տեսակետների, հայացքների և «ֆինանսական վիճակի վերլուծություն» կատեգորիայի ըմբռնման սկզբունքների բազմակողմանի ուսումնասիրություն և քննադատական գնահատական,
- ֆինանսական վիճակի փոփոխության պատճառների, այդ փոփոխության վրա ազդող գործոնների բազմակողմանի ուսումնասիրություն և այդ պատճառների համակարգված ներկայացում ու մեկնաբանություն,
- ֆինանսական վիճակի վերլուծության հայեցակարգային ապարատի ուսումնասիրություն և հստակեցում, ֆինանսական վիճակի վերլուծության գործող մեթոդաբանությունների առավելությունների ու թերությունների բացահայտում և ֆինանսական վերլուծության իրականացման կառուցվածքային-տրամաբանական ալգորիթմի մշակում, որը հիմնվելով ֆինանսական վերլուծության միջազգային պրակտիկայում գործող ավանդական ալգորիթմի հիմնական սկզբունքների վրա, միաժամանակ հաշվի կառնի ժամանակակից հայաստանյան տնտեսության առանձնահատկությունները,
- ՀՀ ոգելից խմիչքների արտադրության ոլորտում գործող ձեռնարկությունների ֆինանսական վիճակը բնութագրող ընդհանրացնող և մասնակի ցուցանիշների համակարգի մշակում և հիմնավորում,
- միջազգային պրակտիկայում ընդունված նորմատիվների համակարգի վերլուծություն և տնտեսվարման արդի պայմաններում ՀՀ ոգելից խմիչքների արտադրության ոլորտում գործող ձեռնարկությունների համար ֆինանսական

վիճակը բնութագրող հիմնական ցուցանիշների արժեքների ընդունելի մակարդակի հաշվարկման մեթոդաբանության մշակում,

- ընթացիկ իրացվելիության գործակցի, շրջանառելիության ցուցանիշների և հաշվեկշռի իրացվելիության մակարդակի գնահատման մեթոդաբանության կատարելագործում,
- ցուցանիշների ձևավորած համակարգի և դրանց արժեքների ընդունելի մակարդակների հաշվարկների հիման վրա ՀՀ ոգելից խմիչքների արտադրության ոլորտի ձեռնարկությունների ֆինանսական վիճակը բնութագրող համապարփակ ինտեգրալ ցուցանիշի կառուցում, որը կազմակերպությունների ֆինանսական վիճակը կգնահատի տարբեր կողմերից և կտա գործոնային վերլուծություն իրականացնելու հնարավորություն:

Ատենախոսության գիտական արդյունքները և նորույթը

Առաջադրված խնդիրների լուծման նպատակով ատենախոսությունում իրականացված հետազոտությունների և վերլուծությունների արդյունքում ստացվել են տեսական և գործնական նշանակություն ունեցող մի շարք արդյունքներ, որոնցից, ըստ հեղինակի, գիտական նորույթն է հանդիսացել ՀՀ ոգելից խմիչքների կազմակերպությունների ֆինանսական վիճակի վերլուծության մեթոդաբանության բարելավումը: Մասնավորապես.

- առաջարկվել է ֆինանսական վիճակի վերլուծության բարելավված կառուցվածքային սխեմա, որում հաշվի են առնված ազգային տնտեսության զարգացման մակարդակը, առանձնահատկությունները, հայկական ընկերություններում ֆինանսական վերլուծության ավանդական ալգորիթմի կիրառման առումով առկա խնդիրները, և որը հիմնված է կազմակերպությունների ֆինանսական վիճակը բնութագրող ցուցանիշների նվազագույն բավարար ու նախընտրելի արժեքների գնահատումների վրա,
- առաջարկվել է կազմակերպությունների վճարունակության գնահատման այլընտրանքային մեթոդաբանություն, հիմքում դնելով ընթացիկ ակտիվները դրամական միջոցների վերածվելու ժամանակաշրջանի և ընթացիկ պարտավորությունների մարման ժամանակահատվածի համադրելիությունը,

- մշակվել է մատրիցային հաշվեկշռի տարբերակի կառուցման բարելավված մեթոդաբանություն, որը հնարավորություն է տալիս գնահատելու կազմակերպության ֆինանսավորման համապատասխան աղբյուրներով ակտիվների ապահովվածության մակարդակը քառաստիճան մոտեցմամբ,
- մշակվել են ՀՀ ոգելից խմիչքների արտադրության ոլորտի ձեռնարկությունների ֆինանսական վիճակի և դրա առանձին ուղղությունների համապարփակ ցուցանիշներ, որոնք կազմակերպությունների ֆինանսական վիճակը գնահատում են բազմագործոն մոտեցումներով և տալիս են գործոնային վերլուծություն իրականացնելու հնարավորություն:

Հետազոտության արդյունքների գիտագործնական նշանակությունը

Հետազոտության արդյունքները, առաջարկված մոտեցումները, մեթոդները, վերլուծական եզրակացություններն ու առաջարկությունները կարող են գործնական կիրառություն գտնել ՀՀ ոգելից խմիչքների արտադրության ոլորտի կազմակերպութունների ֆինանսական վիճակի վերլուծության, գնահատման, ինչպես նաև այդ վիճակի բարելավմանն ուղղված միջոցառումների մշակման համար: Ատենախոսությունն իրենից ներկայացնում է ֆինանսական և կառավարչական վերլուծության և ֆինանսական կառավարման բնագավառի տեսական և գործնական ուսումնասիրությունների հիման վրա մշակված հետազոտություն, որը կարող է տեղեկատվական նյութ հանդիսանալ տարբեր մասնագետների համար, ովքեր զբաղվում են վերը նշված հիմնախնդիրների ուսումնասիրություններով:

Հետազոտության կառուցվածքը, ծավալը և հիմնական բովանդակությունը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններ բաժնից, օգտագործված գրականության ցանկից ու հավելվածներից: Աշխատանքի ծավալը 161 էջ է, հավելվածները՝ 157 էջ:

Հետազոտության ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակներն ու խնդիրները, օբյեկտը և առարկան, տեսամեթոդական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթները, գործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ «Կազմակերպության ֆինանսական վիճակի վերլուծության տեսական-մեթոդաբանական հիմքերը» գլխում ատենախոսը անդրադարձել է ֆինանսական վերլուծություն, ֆինասական վիճակի վերլուծություն կատեգորիաներին և ֆինանսական վիճակի վերլուծության առանձին ուղղություններին և ուսումնասիրելով միջազգային վերլուծական պրակտիկայում այդ կատեգորիաների վերաբերյալ հետազոտողների կարծիքները, տվել է «ֆինանսական վերլուծություն», «ֆինասական կայունություն» կատեգորիաների հեղինակային սահմանումներ: Այս գլխում՝ ուսումնասիրելով ֆինանսական վիճակի վերլուծության միջազգային պրակտիկայում կիրառվող տարբեր մեթոդաբանություններ, գնահատելով դրանց առավելություններն ու թերությունները, ատենախոսն առաջարկել է ֆինանսական վերլուծության իրականացման իր կողմից մշակված ալգորիթմը:

Ատենախոսության երկրորդ՝ «Ֆինանսական վիճակը բնութագրող ցուցանիշների համակարգի և դրանց նվազագույն բավարար արժեքների սահմանման մեթոդաբանության մշակումը» գլխում ատենախոսը առանձնացրել է ՀՀ ոգելից խմիչքների արտադրության ոլորտի կազմակերպությունների ֆինանսական վիճակը բնութագրող առավել ընդհանրացնող ցուցանիշների համակարգ (զուտ ընթացիկ ակտիվներ, իրացվելիության ցուցանիշներ, ֆինանսական կայունությունը բնութագրող ցուցանիշներ): Քանի որ ՀՀ-ում դեռևս չկա տարբեր ճյուղերի ձեռնարկությունների ֆինանսական վիճակը բնութագրող կարևորագույն ցուցանիշների թարմացվող վիճակագրական տվյալների բազա, իսկ միջազգային վերլուծական պրակտիկայում սահմանված համընդհանուր նորմատիվները հաշվի չեն առնում առանձին տնտեսությունների զարգացման մակարդակն ու առանձին ոլորտների առանձնահատկությունները, ատենախոսն առաջարկել է ՀՀ ոգելից խմիչքների ոլորտի կազմակերպությունների հիմնական ցուցանիշների նվազագույն բավարար և նախընտրելի մակարդակների հաշվարկի մոտեցումներ:

Ատենախոսության երրորդ՝ «Կազմակերպությունների ֆինանսական վիճակի գնահատման կատարելագործման ուղիները» գլխում առաջարկվել է կազմակերպությունների վճարունակության գնահատման մոտեցում: Առաջարկված մոտեցմամբ հաշվարկվող վճարունակության գործակցի մակարդակը, ըստ

ատենախոսի, կարելի է դիտարկել որպես կազմակերպության անվճարունակության ռիսկի չափանիշ:

Երրորդ գլխի երկրորդ ենթագլխում մշակվել են մատրիցային հաշվեկշռի նորացված և կատարելագործված տարբերակի կառուցման սկզբունքներ ու մոտեցումներ, որոնք հնարավորություն են տալիս գնահատել կազմակերպության ֆինանսավորման համապատասխան աղբյուրներով ակտիվների ապահովվածության մակարդակը:

Երրորդ գլխի երրորդ ենթագլխում ատենախոսի կողմից առաջարկվել է ֆինանսական վիճակի և դրա առանձին ուղղությունների ամփոփ ինտեգրալ ցուցանիշների կառուցման մեթոդաբանություն, որը հաշվի է առնում գործունեության ոլորտի առանձնահատկությունները, վերլուծվող կազմակերպությունների ակտիվների և պասիվների կազմը, կառուցվածքը և տալիս է ֆինանսական վիճակի փոփոխության գործոնային վերլուծության հնարավորություն:

«Եզրակացություններ» բաժնում ներկայացվել են հետազոտության տեսական, մեթոդաբանական և գործնական ուսումնասիրությունների արդյունքում կատարված եզրահանգումներն ու հիմնական արդյունքները:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսությունը զերծ չէ նաև թերություններից, որոնցից մեր կողմից կարևորվել են հետևյալները.

1. Աշխատանքի 1-ին գլխում ներկայացվել է «ֆինանսական վիճակ»-ի հեղինակային սահմանում, այն է՝ «ձեռնարկության արտադրական ներուժը, սեփական և փոխառու ֆինանսական ռեսուրսների տեղաբաշխումն ու օգտագործումը, ինչպես նաև ժամանակի ցանկացած պահին դրանց բավարարությունը բնութագրող տնտեսական կատեգորիա...»: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ աշխատանքում ցուցանիշների հաշվարկման համար առանցքային աղբյուր է հանդիսանում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ կարծում ենք, որ այդ հաշվետվության միջոցով ձեռնարկության արտադրական ներուժի գնահատման հնավարությունը լրացուցիչ հիմնավորման կարիք ունի, քանի որ կազմակերպության արտադրական ներուժը կախված է առկա սարքավորումներից,

արտադրության ավտոմատացման մակարդակից, արտադրության տեխնոլոգիայից և համապատասխան մասնագետների առկայությունից, ինչի վերաբերյալ տեղեկատվություն առկա չէ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

2. Աշխատանքի 1-ին գլխում որպես նորույթ է ներկայացվել ՀՀ ոգելից խմիչքների արտադրության ոլորտում գործող կազմակերպությունների ֆինանսական վերլուծության իրականացման ալգորիթմը, ինչի գիտական բովանդակությունը, մեր կարծիքով, բավարար հիմնավորված չէ, քանի որ, ըստ էության, իրականացվել է ֆինանսական վերլուծության իրականացման ավանդական մոտեցման մանրամասնեցված տարբերակի նկարագրություն:
3. Աշխատանքի 2.1 ենթագլխում Տ.Մանուկյանի կողմից մանրակրկիտ ներկայացվել և մեկնաբանվել են զուտ ընթացիկ ակտիվներ և սեփական ընթացիկ ակտիվներ կատեգորիաների տնտեսագիտական էությունն ու դրանց սկզբունքային տարբերությունները թե՛ տնտեսական բովանդակության և թե՛ իրենց հաշվարկի ալգորիթմների առումով: Այս առումով, ատենախոսը հստակ տարբերակելով այդ երկու ցուցանիշները շատ մակերեսային է անդրադարձել դրանցից յուրաքանչյուրի (հատկապես սեփական ընթացիկ ակտիվների) կիրառման ոլորտներին և ֆինանսական վիճակի գնահատման համատեքստում՝ այդ կատեգորիաների կիրառման նպատակներին, ինչը, մեր կարծիքով, լրացուցիչ մեկնաբանությունների կարիք ունի:
4. Աշխատանքի 2-րդ գլխում զուտ ընթացիկ ակտիվների և ընթացիկ իրացվելիության գործակցի նվազագույն բավարար արժեքների հաշվարկների ալգորիթմները ներկայացնելիս, իսկ 3.2 ենթագլխում ֆինանսավորման աղբյուրներով ակտիվների ծածկման հաջորդականությունը սահմանելիս (էջ 109, աղյուսակ 3.2.1) տրված ընթացիկ կանխավճարները ատենախոսի կողմից դասվել են դանդաղ կամ դժվար իրացվելի ընթացիկ ակտիվների խմբին, ինչը մեր կարծիքով վիճելի է և լրացուցիչ հիմնավորման կարիք ունի:
5. Աշխատանքի հավելվածներ բաժնում որոշ հավելվածներ ամբողջությամբ տեսական և գրքային նկարագրական նյութ են պարունակում (հավելվածներ 9; 12; 16): Մեր կարծիքով դրանք կարելի էր չներառել հավելվածներում՝ առանց այդ էլ ծավալուն հավելվածներ բաժինը ավելորդ չծանրաբեռնելու համար, այլ

աշխատանքում ուղղակի կարելի էր տալ հղումներ համապատասխան աղբյուրներին:

6. Աշխատանքում առկա են տեխնիկական բնույթի թերություններ. մասնավորապես. որոշ աղյուսակներում առկա են գունավորված սյունակներ և ցուցանիշներ (էջ 68, աղ.2.2.1; էջ 110, աղ.3.2.2; էջ 115, աղ.3.2.5; էջ 139, աղ.3.3.9), սակայն աղյուսակներին կից առկա չեն այդ գույների մեկնաբանությունները պարունակող հղումներ:

-

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նշված դիտողությունները չեն նսեմացնում աշխատանքի արժանիքներն ու հիմնականում հետապնդում են ատենախոսությունում քննարկվող հիմնախնդիրների հետագա ուսումնասիրությունների խորացման և բարելավման նպատակ:

Տ. Մանուկյանի թեկնածուական ատենախոսությունը կարելի է համարել ավարտուն գիտական հետազոտություն, որն ունի տեսական և կիրառական նշանակություն: Ներկայացված մոտեցումները, եզրահանգումները, գործնական առաջարկություններն ու արդյունքները կարող են նպաստել ՀՀ խմիչքների արտադրության ոլորտի կազմակերպությունների ֆինանսական վիճակի բազմակողմանի վերլուծությանն ու այդ վիճակի բարելավման պահուստների բացահայտմանը:

Սեղմագիրը կազմված է ԲՈԿ-ի պահանջներին համապատասխան և համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը և արտացոլում դրա հիմնական դրույթներն ու արդյունքները: Ատենախոսության հիմնական արդյունքները հրապարակվել են հեղինակի հրատարակած գիտական ութ գիտական հոդվածներում:

Ելնելով վերը նշվածից՝ կարծում ենք, որ **Տիգրան Ռազմիկի Մանուկյանի «Ֆինանսական վիճակի վերլուծության և գնահատման կատարելագործման ուղիները (ՀՀ խմիչքների արտադրության նյութերով)» թեմայով ատենախոսությունը** համապատասխանում է «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակը արժանի է **Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում»**

մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի հայցվող գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝
ՀՀ ֆինանսների նախարարության Հաշվապահական
հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման,
հաշվետվությունների մշտադիտարկման վարչության
հաշվապահական հաշվառման մեթոդաբանության բաժնի պետ,
տնտեսագիտության թեկնածու

..... Ր. Ա. Ալեքսանյան

11 հոկտեմբերի 2021թ.

Ր.Ա.Ալեքսանյանի ստորագրության
իսկությունը հաստատում եմ՝
ՀՀ ֆինանսների նախարարության Հաշվապահական
հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման,
հաշվետվությունների մշտադիտարկման վարչության պետ

..... Կ. Ի. Ալավերդյան

11 հոկտեմբերի 2021թ.